## ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐ
## JUBILEES

# ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԳԱՍԱԲԵՐ ՈՒՂԻՆ

Ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Յուրի Միքայելի Սուվարյանը բոլորեց իր ծննդյան 75-ամյակը:

Յու. Սուվարյանը ծնվել է 1943 թ. մայիսի 15-ին, ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում: 1960 թ. այդ շրջանի Ավետարանոց գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետ, որն ավարտել է գերազանցությամբ: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1983 թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1968 թ. նոյեմբերից սկսվում է Յու. Սուվարյանի մանկավարժական գործունեությունը՝ տնտեսագիտական կադրերի պատրաստման ուղղությամբ, երբ նա աշխատանքի է անցնում ԵՊՀ ժողտնտպլանավորման և ճյուղային էկոնոմիկաների ամբիոնում նախ՝ որպես ասիստենտ, այնուհետև՝ ավագ դասախոս և դոցենտ: 1975 թ. Երևանի ժողովրդական տնտեսության (ներկայիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) կազմավորումից հետո նա զբաղեցրել է այդ բուհում դոցենտի պաշտոն՝ իր ակտիվ մասնակցությունը բերելով արդիական գիտական որոնումներին: Դրանք տվեցին ակնկալվող արդյունքը, երբ նա պաշտպանեց «Ամբողջական աշխատանքի արտադրողականությունը ՀԽՍՀ արդյունաբերությունում. մեթոդաբանության և կառավարման հարցեր» թեմայով դոկտորական ատենախոսությունը: 1984 թ., արդեն պրոֆեսորի գիտական կոչումով, Յու. Սուվարյանն իր արդյունա-

վետ գիտական գործունեությունն է իրականացրել Երևանի Ժողտնտեսության ինստիտուտում՝ ի հայտ բերելով նոր որակներ ոչ միայն ինքնատիպ հետազոտողի, այլև գիտակազմակերպչական աշխատանքի անդաստանում: 1987–1994 թթ. նա այդ ինստիտուտում գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր էր, տնտեսագիտական գիտության աստիճաններ շնորհող խորհրդի նախագահ, իսկ 1994 թ. մայիսից մինչև այժմ գլխավորում է ՀՊՏՀ կառավարման ամբիոնը:

2006–2011 թթ. Յու. Սուվարյանը զբաղեցնում էր ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնը: Նրա ղեկավարության տարիներին բուհն անցավ արդի պահանջներին համապատասխան բարեփոխումների տևական շրջան՝ իր ուսումնակրթական ու մտավոր առաջադրումների նորովի դրսևորումներով: Գիտական և բուհական ներուժի կազմակերպչի՝ նրա կարողությունների ճանաչումը համալրվեց նաև հանրության կողմից նրա անաչառ գնահատման սահմանները: 2006 թ. Յու. Սուվարյանն ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 2010 թ.՝ ՀՀ ԳԱԱ իսկական անդամ: 2011 թ. հուլիսից նա ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն է: Այս պաշտոնում նա իր նշանակալի ավանդն է ներդրել հայագիտության զարգացման ռազմավարության, հայագիտության զարգացման հայեցակարգի և հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի ստեղծման և գործառութային ասպարեզում: 2014 թ. նրան շնորհվել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչում:

Յու. Սուվարյանի մասնագիտական-գործնական ունակությունները դրսևորվեցին 1990-ական թթ. սկզբներին, երբ նա աշխատում էր որպես ՀՀ վարչապետի խորհրդական: Երկրի հույժ դժվարին ժամանակներում պիտանի եղան նրա արդյունավետ գաղափարներն ու արագ կողմնորոշվելու կարողությունը՝ տնտեսական ու սոցիալական երևույթների ներքին կապերի մեջ հայտնված հիմնախնդիրներն ի հայտ բերելու և գնահատելու տեսակետից:

1994 թվականից Յու. Սուվարյանը ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչն է: Նրա ջանքերով ամբիոնը վերածվել է գիտամանկավարժական ճանաչված կենտրոնի: Իր գիտական բեղմնավոր աշխատանքի հանրագումարն են հեղինակային հրապարակումները՝ շուրջ 270 աշխատություն, որից 44-ը՝ մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ: Նրա գիտահետազոտական աշխատանքի կարևոր արդյունքներից են արտադրության արդյունավետության և ամբողջական աշխատանքի արտադրողակա-

նության գնահատման ու կառավարման նոր մեթոդաբանության մշակումը, գիտության կառավարման կարևոր խնդիրների լուծման, հանրային կառավարման տեսության յուրօրինակ հայեցակարգի հիմնավորումը, ՀՀ վարչա-տարածքային բաժանման և տեղական ինքնակառավարման երկաստիճան համակարգի մշակումը, հայ կառավարչական մտքի զարգացման ընթացքի և միտումների բնութագրությունը, հանրապետության տնտեսական զարգացման վրա կրթության և գիտության ազդեցության գնահատումը, գիտակրթական համակարգի կառավարման ճկուն հայեցակարգի առաջադրումը: Վերոհիշյալ հրատարակությունների մեջ պետք է առանձնացնել «Տնտեսություն, գիտություն, կրթություն» մենագրությունը (2014 թ.), որի էջերում դիտարկվում են տնտեսության ռազմավարական բարեփոխումների, հանրային կառավարման և այս բնագավառի ժամանակակից այլ հիմնախնդիրներ:

Յու. Սուվարյանի նախաձեռնությամբ ու խմբագրմամբ լույս է տեսել «Մենեջմենթ» հայերեն բուհական առաջին դասագիրքը (վերահրատ. 2016 թ.), որը վերջին շրջանի տեսական-մանկավարժական մտքի ուշագրավ դրսևորումներից է: Բուհական ուսուցման համակարգի արդիականացման մեջ պրոֆ. Յու. Սուվարյանի և նրա համախոհների ծանրակշիռ ներդրումը եղան «Ձեռնարկության արդյունավետ կառավարում» և «Ծառայությունների ոլորտի արդյունավետ կառավարում», հրատարակությունները, էլեկտրոնային համակարգչային գործարար խաղերի մշակումն ու կիրառական շրջանառությունը:

Հայ իրականության մեջ Յու. Սուվարյանն առաջինն է անդրադարձել հանրային կառավարման էության, մեթոդաբանության ու պատմական զարգացման հիմնահարցերին՝ առաջադրելով ինքնատիպ լուծումներ: Այս՝ կառավարման ոլորտում նրա աշխատությունների բեկումնային նշանակությունը վկայում է, որ Յու. Սուվարյանը գործնականում կառավարման գիտության արդի հայկական դպրոցի հիմնադիրն է:

Հոբելյարն իր մնայուն վաստակն ունի տնտեսագիտական բարձրորակ կադրերի, գիտական հերթափոխի պատրաստման ասպարեզում: Նրա ղեկավարությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան են ստացել բազմաթիվ երիտասարդ մասնագետներ, արժեքավոր խորհրդատվություն՝ դոկտորի աստիճանին հավակնող տնտեսագետներ: Իր մասնագիտական ընդարձակ կարողություններն ու գիտամանկավարժական վաստա-

կը գնահատվել են բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով, այդ թվում «Անանիա Շիրակացի», «Վաչագան Բարեպաշտ», «Դավիթ Անհաղթ», ԼՂՀ «Մայրական երախտագիտություն» և այլն: Նա «Հանրային կառավարում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», «Բանբեր հայագիտության» և այլ միջազգային գիտական հրատարակությունների խմբագրական խորհուրդների անդամ է, ՀՊՏՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Արցախի պետական և այլ համալսարանների պատվավոր պրոֆեսոր: Յու. Սուվարյանն իր գիտամանկավարժական հարուստ փորձն ի սպաս է դրել Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի և ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնների կայացմանը:

Հատկապես պետք է նշել Յու. Սուվարյանի շնորհակալ նախաձեռնություններն ու գործուն մասնակցությունը Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ստեղծման գործում (2012 թ.): ՀՀ ԳԱԱ նախագահության և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումներով հիմնվեցին «Բանբեր հայագիտության» բազմալեզու գիտական հանդեսը (2013 թ.), (առաքվում է արտերկրի տարբեր գիտական կենտրոններ և գրադարաններ) և «Հիմնարար հայագիտություն» անգլերեն էլեկտրոնային գիտական հանդեսը (2015 թ., ընթերցվում է աշխարհի ավելի քան 110 երկրներում):

Ապրած տասնամյակների բարձունքին վաստակաշատ գիտնականն ու քաղաքացին շարունակում է իր անթեք ընթացքն ու նոր մտահղացումներով լեցուն գործունեությունը: Շնորհավորում ենք նրան իր հոբելյանի առթիվ՝ մաղթելով արևշատություն և քաջառողջություն:

***«ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ,***
***ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ***